«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
Առարկա (8-րդ դասարան)

Անուն Հայրանուն Ազգանուն ______________________________

Դպրոց ______________________________

Դասարան ____________ Խումբ ____________

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա՛ այս գրվածքը, որը ճանաչված հայ գրող Հակոբ Պարոնյանի ստեղծագործության արևելահայերեն մշակումն է:

## ՔԱՂԱՔԱՎԱՐԻ ԳՈՂԸ

Մի հարուստ մարդ, առավոտյան վաղ արթնանալով, որոշում է զբոսնել իր առանձնատանը մերձակա անտառում: Հագնում է իր ընտիր վերարկուն, գրպանն է դնում դրամով լի քսակը, թանկարժեք հեռախոսը և դուրս է գալիս պարտեզի հետևի դռնակից:

Գարնան պայծառ օր է, արեգակը ջերմ ժպտում է, թռչունները երգում են և ճյուղից ճյուղ ոստոստում, առվակը մեղմ կարկաչում է խաշամի տակ: Հարուստը զմայլվում է անուշ առավոտով, նստում է հաստաբուն կաղնու տակ և ննջում:

Բավական ժամանակ անց նա աչքերը բաց է անում, իր դիմաց տեսնում է մի մարդ՝ ատրճանակի փողն իր վրա պահած:

–Բարի օր, – քաղաքավարի և սիրալիր ասում է հարուստը:

–Հազար բարի,–պատասխանում է ատրճանակով մարդը:

–Ինչո՞վ կարող եմ ծառայել Ձեզ,– քաղցրությամբ հարցնում է հարուստը:

–Խնդրում եմ, ի՛նձ տվեք Ձեր քսակը,– քաղաքավարությամբ և հեզորեն ասում է ատրճանակով մարդը:

–Սիրով,– ասում է հարուստը, հանում է դրամով լի քսակը և տալիս ավազակին:

ROUND SQUARE
CIS MEMBER

Սակայն կողոպտիչը չի հեռանում:

–Էլ ի՞նչ եք ուզում, հարգելի՛ս,– հարցնում է հարուստը:

– Ձեր հեռախոսը,– նույն բարեկիրթ ձայնով ասում է ելուզակը:

–Ահավասիկ, համեցե՛ք,– պատասխանում է հարուստը և նրան է մեկնում իր թանկարժեք հեռախոսը:

–Կտա՞ք նաև Ձեր ժամացույցը, կարծես թե ոսկուց է, այո՞:

–Այո՛, խնդրեմ:

–Շնորհակալություն, սիրելի՛ պարոն, երախտապարտ եմ,– հուզված ասում է ավարառուն, գլուխ տալիս և հեռանում:

Մեծատունը շարունակում է քայլել անտառում, հիանալ գարնան օրով, դալար կանաչով: Մեկ էլ նրա դիմաց դարձյալ ելնում է նույն թալանչին:

–Էլ ի՞նչ անեմ Ձեզ համար, բարեկա՛մս– քնքշագին հարցնում է ունևոր մարդը:

–Պարո՛ն, ես մոռացա Ձեզնից խնդրել Ձեր վերարկուն. իմն արդեն հնոտի է:

–Շատ սիրով,– մեղմագին ասում է մեծահարուստը, հանում, զոհին է մեկնում իր վերարկուն:

Գողն էլ նրան է հանձնում իր ցնցոտին: Հարուստը հագնում է ելուզակի վերարկուն և շարժվում դեպի տուն՝ հանգիստ ու գոհ: Ճանապարհին նա ձեռքը տանում է իր աղքատիկ վերարկուի գրպանը ու պշահար կանգ առնում...

Ավազակի հնամաշ վերարկուի գրպանից հանում է իր քսակը՝ դրամով լի, հեռախոսը և ժամացույցը...

Կատարի՛ր առաջադրանքները:

1. Գրվածքի ո՞ր բառերը՝ որպես բացատրություն կամ հոմանիշ, տրված դարձվածքների կողքին պիտի գրես: Հիշի՛ր, որ մեկ բառ չես գրելու. դրանք մի քանիսն են **(5 միավոր)**:

   Ցուլ ու մեղրի մեջ լինող--------------------------------------------------------------------------

   Աչքի սուրմա թոցնող--------------------------------------------------------------------------

2. Տեքստից գտի՛ր տրվածների հոմանիշները, գրի՛ր համապատասխան տողում **(5 միավոր)**.

   Դրամապանակ-------------------------------------------------------

   Խազալ-------------------------------------------------------

   Ջորձ-------------------------------------------------------

Խայտալ-------------------------------------------------------

Արևագալ-----------------------------------------------------

3. Տեքստում գտի՛ր և համապատասխան բառի կողքին գրի՛ր տրվածների հականիշները (5 միավոր):

Ընչազուրկ------------------------------------------------------

Դառը----------------------------------------------------------

Գոս------------------------------------------------------------

Անշնորհակալ--------------------------------------------------

Վայրագաբար---------------------------------------------------

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր հետևյալ արմատներն ունեցող բառերը: Ցմռռանաս բառերը վերլուծել բառակազմորեն, նշել հնչյունափոխությունը առկայության դեպքում (10 միավոր):

Կա--------------------------------------------------------------------------

----------------------

Սեր-------------------------------------------------------------------------

----------------------

Ուշ-------------------------------------------------------------------------

----------------------

Բար-------------------------------------------------------------------------

----------------------

Առ--------------------------------------------------------------------------

----------------------

5. Համեմատի՛ր արեգակ և դոնակ բառերը. նշի՛ր դրանց նմանությունները և տարբերությունները (5 միավոր):

Նմանություն----------------------------------------------------------------

-----------------

Տարբերություն--------------------------------------------------------------

----------------

6. Տեքստից դո՛ւրս գրիր «քաղաքավարի» բառերը: Ի՞նչ ես կարծում, դրանք ի՞նչ դեր ունեին այս պատմության մեջ (10 միավոր):

7. Քեզ չզարմացրե՞ց գրվածքի ավարտը: Ի՞նչ ես կարծում ավազակը մոռացե՞լ էր, թե՞ դիտավորյալ էր գողոնը թողել հնամաշ վերարկուի գրպանում: Ի՞նչն օգնեց հարուստ մարդուն **(10** միավոր**)**:

--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------------------
-----------------------------------------------